ՕՐԱԿԱՐԳ

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

ԿԱՅԱՑԱԾ 21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆ, ԺԱՄԸ 11:00

ԹԻՎ 1

1. ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ.

2.ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՋՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ.

3. ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐՎԱ ՍԱՀՄԱՆՈՒՄ:

Նոյեմբերյան համայնքի նորընտիր ավագանու առաջին նիստը կայացավ 2021 թվականի դեկտեմբերի 21-ին: Ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 64-րդ հոդվածի առաջին մասի՝ համայնքի ղեկավարի ընտրության համար կայացվող նիստը վարում է նիստին ներկա տարիքով ավագ ավագանու անդամը: Տարիքով ավագը համայնքի ավագանու անդամ Սամվել Սեդրակի Բուդաղյանն էր, ով էլ զբաղեցրեց նիստը վարողի համար հատկացված տեղը:

Նա ողջույնի և շնորհավորանքի խոսք հղեց ներկաներին և ներկայացրեց նիստին ներկա ավագանու անդամներին: Այնուհետև նիստի օրակարգը դրվեց քվեարկության: Այն հաստատվեց միաձայն:

Օրակարգի առաջին հարցը Նոյեմբերյան համայնքի ղեկավարի ընտրության հարցն էր: Նիստը վարողը բարձրաձայն ընթերցեց կարգը և առաջարկեց առաջադրել իրենց թեկնածուներին:

Առաջինը ձայնը տրվեց «Ապրելու երկիր» կուսակցության ներկայացուցչին և կուսակցության կողմից առաջադրվեց Արսեն Լիպարիտի Աղաբաբյանը: «Հանուն Հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինք» կուսակցությունը իր կողմից թեկնածու չառաջադրեց: Իսկ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը առաջադրեց Կարեն Հովիկի Աբազյանի թեկնածությունը:

Նիստը վարողը առաջադրված թեկնածուներին առաջարկեց հանդես գալ ելույթով: Արսեն Աղաբաբյանը և Կարեն Աբազյանը իրենց ողջույնի խոսքը հղեցին ներկաներին և համայնքի ավագանու անդամներին:

Առաջադրված թեկանածուներին հարցեր չտրվեցին:

Ժամը 11:35 րոպեին սկսվեց քվեարկությունը և 11:41 րոպեին ավարտվեց:

Քվեարկության արդյունքում Արսեն Լիպարիտի Աղաբաբյանի օգտին քվեարկեցին համայնքի ավագանու 12 անդամ, իսկ Կարեն Հովիկի Աբազյանի օգտին քվեարկեցին համայնքի ավագանու 9 անդամ:

Համաձայն ՀՀ Ընտրական օրենսգիրք ՀՀ Սահմանադրական օրենքի հոդված 142.2-ի 3-րդ մասի պահանջների Նոյեմբերյան համայնքի ղեկավար է ընտրվեց Արսեն Լիպարիտի Աղաբաբյանը:

Այնուհետև նիստը վարողը նորընտիր համայնքի ղեկավարին հրավիրեց տեղ զբաղեցնել նախագահությունում:

Օրակարգի երկրորդ հարցը նորընտիր համայնքի ղեկավարի երդման արարողության կազմակերպչական հարցերի մասին որոշում կայացնելու հարցն էր, այսինքն արարողության կարգը հաստատելը:

Ձայների մեծամասնությամբ հաստատվեց Նոյեմբերյան համայնքի ղեկավարի երդման արարողության կարգը:

Օրակարգի վերջին՝ երրորդ հարցը Նոյեմբերյան համայնքի ավագանու հերթական նստաշրջանի օրվա սահմանման մասին հարցն էր, որն էլ ընդունվեց ձայների մեծամասնությամբ:

Առաջին նստաշրջանի օր սահմանվեց 2021 թվականի դեկտեմբերի 29-ը, ժամը 11:00-ն:

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ԱՂԱԲԱԲՅԱՆ ԱՐՍԵՆ
ԱՄԻՐԱՂՅԱՆ ՎԱՆՈՒՇ
ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԲՈՒԴԱՂՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՄԵԼԻՔՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ԱՂԱՄՅԱՆ ՄՀԵՐ
ԱՆԱՆՅԱՆ ՔԱՋԻԿ
ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ ԱՐՏԱԿ
ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ԲԱՀԱԴՈՒՐՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՇՈՏ

ԱԲԱԶՅԱՆ ԿԱՐԵՆ
ՊԱՐԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ
ԲԵԳԼԱՐՅԱՆ ՀԱՅԿԱՆՈՒՇ
ՄԱՄՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ԱԲՈՎՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄՈՒՂՈՒՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԽԵՉՈՒՄՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄՀԵՐ
ԲԵՐՈՅԱՆ ԱԻԴԱ

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՂ ՍԱՄՎԵԼ ԲՈՒԴԱՂՅԱՆ